ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Վահրամ Մկրտչյանի, Նաիրա Կարապետյանի, Ռուզաննա Մուրադյանի, Կարինե Պողոսյանի, Գագիկ Մելիք-յանի, Ռոբերտ Սարգսյանի և Արմեն Կարապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-քում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-715-06.02.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառա-վարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատ-ման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«ՀՀ դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքի իրականացմանը՝ բացառելով հղումներ այնպիսի նորմերին, որոնց գործողությունը դադարել է* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվող փոփոխությամբ կբացառվի կատարել հղումներ այնպիսի նորմերին, որոնց գործողությունն արդեն իսկ դադարել է:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

««Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-715-06.02.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասը գործող խմբագրությամբ ունի հետեւյալ բովանդակությունը. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1] -րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով առաջարկություն ստանալիս գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը կայացնում է որոշում մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ եւ ներկայացնում դատարան կամ անում նույն օրենսգրքի 309[1] -րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված միջնորդություններից որեւէ մեկը»: Այսինքն՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասը հղում է կատարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309[1] -րդ հոդվածի 5-րդ մասին, որը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 02.04.2010թ. ընդունված ՍԴՈ-872 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:
ՀՀ Սահմանադրական դատարանն իր նշված որոշման մեջ նշել է. «Այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարեւոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության, ինչպես նաեւ մրցակցային դատավարության եւ կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը»:
Այսինքն՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումը նախատեսում է նորմ, որը սահմանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այն նորմի վերաբերյալ ընթացակարգային կանոն, որն արդեն իսկ ճանաչվել է հակասահմանադրական:
Առաջարկվող լուծումները: Հաշվի առնելով վերը նշված իրավիճակը եւ խնդիր ունենալով ապահովելու համակարգային եւ միասնական իրավակարգավորում՝ սույն նախագծով առաջարկվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:
Ակնկալվող արդյունքը: Նշված փոփոխությունների իրականացմամբ կապահովվի իրավական որոշակիության սկզբունքի իրականացումը՝ բացառելով հղումներ այնպիսի նորմերին, որոնց գործողությունն արդեն իսկ դադարել է: